

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՅ

«Պատմա-բանասիրական հանդեսի» անցյալ տարվա № 4-ում տպագրվեց ՀՍՍՀ ԳԱ արևելագիտության ինստիտուտի հին պատմության բաժնի ավագ գիտական աշխատակից, լեզվաբան Ն. Ա. Մկրտչյանի գրախոսությունը երկրաբանական գիտությունների թեկնածու Ս. Այվազյանի «Հնագույն Հայաստանի մշակույթի պատմությունից» գրքույկի մասին, գրախոսություն, որը ցույց է տրված, որ նշված աշխատության հեղինակի հայագիտական «հայտնագործությունները» դիվետանական ֆանտազիայի արգասիք են և ոչ մի կապ չունեն գիտության հետ։ Քննադատական այս հոդվածի աոթիվ գրող Ս. Խանզադյանը վերջերս մեր հասցեով ուղարկել է մի նամակ («Նամակ խմբագրությանը») և Մաշտոցի անվան Մատենադարանում 1986 թ. սեպտեմբերին ունեցած իր ելույթի վերանայված տեքստը (ոուսերեն, բաղմացված քսերոքսով), որոնցում ամեն կերպ իր պաշտպանության տակ վերցնելով Ս. Այվազյանին՝ կոպիտ հարձակումներ է գործում ն. Մկրտչյանի դեմ և միաժամանակ փորձում զրպարտել ու վարկաբեկել հանրապետության և Սովետական Միության մի շարք անվանի հայագետների ու արևելագետների այն բանի համար, որ նրանք ընդունում են ուրարտական պետության, ուրարտերեն լեզվի գոյությունը և մերժում են Այվազյանի տնաբույս «գլուտը» հայերին և հիբոսուներին նույնացնելու մասին։ Ուտահարելով փաստերն ու տրամաբանությունը, մոռանալով թե ինչ ժամանակ ենք ապրում մենք այսօր, նա այդ գիտականների նկատմամբ առաջ է քաշում նաև քաղաքական ֆանտաստիկ մեղադրանքներ։

«Դժբախտաբար կան հայ գիտնականներ,—հայտարարում է գրողը,—որոնք ամեն կերպ աշխատում են հայ ժողովրդին պատկանող հնագրային արժեքները (նաև հողը, պետականությունը) խլել հայ ժողովրդից և ռտարացնել...»:

Ուրարտական պետության գոյությունն ընդունող գիտնականների մասին Ս. Խանզադյանը գրում է. «Այդ մարդիկ վաճառում, ուրիշների՝ հաճախ թշնամիների ձեռքն են մատնում Հայաստանի շրջահագրաձայն պատմության մշակույթային արժեքները... կողոպտում են մեր ժողովրդին, թալանում մեր դամբարանները, կեղծում են պատմությունը ի վնաս հայ ժողովրդի»։ Զայրույթից զլուխը կորցրած գրողը այնուհետև բացականչում է. «Փարիսեցիներ... ստախոսներ և սեփական օջախի կողոպտիչներ։ Թշնամիներ»։

Կարողավ այս և նման կարգի մյուս հերյուրանքները, որոնց թիվը բավական շատ է, ակամա մտածում ես, թե ի՞նչ աստիճանի կարող են հասնել չափ ու սահման չճանաչող անպատասխանատվությունը և սանձարձակությունը։

Իսկ ովքե՞ր են այդ հանցագործները։ Բանից պարզվում է, որ դրանք այժմ գործող, աշխատող այն ճանաչված հայագետներն են, ովքեր հսկայական ծառայություն ունեն հայ ժողովրդի բաղմագրային պատմության և մշակույթի լուսաբանման ու մշակման գործում, մարգիկ, որոնց հայրենասիրության վրա ոչ ոք չի կարող ստվեր գցել։ Այստեղ յսնդիրը միայն այն է, որ նախքան անմիտ ու ծիծաղելի մեղադրանքներին դիմելը պետք է կարողանալ տարբերել գիտությունը տգիտությունից և իսկական, առողջ հայրենասիրությունը՝ կեղծ, հիվանդոտ հայրենասիրությունից։

Խանզադյանը գտնում է, որ «ուրարտագետները» (այս բառը նա միշտ չակերտների մեջ է վերցնում) մի քանի կեղծարարներ են և այդ պատճառով էլ նրանց անվանում է «ուրարտագետների շայկա» (ոչ ավել, ոչ պակաս)։ Զխոսելով տարրական դաստիարակության ու կուլտուրայի բացակայության մասին, նշենք, սակայն, որ գրողն ըստ երևույթին գաղափար չունի այն մասին, որ ուրարտական պետության դոյուքությունը ընդունել են և ընդունում են ոչ թե մի քանի «կեղծարարներ», այլ բոլոր լուրջ մասնագետները, ականավոր հայագետները և արևելագետները։ Ահա դրանց մի մասի անունները. Ն. Մառ, Հ. Թրբելի, Մ. Նիկոլսկի, Ի. Մեշչանինով, Վ. Ստրովե, Մ. Աբեղյան, Հ. Աճառյան, Ն. Աղոնց, Հ. Մանանդյան, Գ. Ղափանցյան, Գ. Մեբեթեի, Գ. Մեխիբեշվիլի, Բ. Պիոտրովսկի, Ի. Դյակոնով, Վ. Ավդեև, Բ. Առաքելյան, Գ. Զահեկյան, Գ. Սարգսյան, Ն. Հարությունյան, Հ. Մարտիրոսյան, Գ. Տիրացյան, Ս. Նսայան, Ս. Իսրայելյան և շատ ուրիշներ։ Սովետական Միության ժողովուրդների հին պատմությանը

նվիրված բոլոր դպրոցական ու բուհական դասագրքերում խոսվում է ուրարտական պետության մասին: Ուրարտագիտությունը միշտ զգալի գիտություն է. ուրարտացիներին, նրանց լեզվի ու մշակույթի մասին գրել են նաև արտասահմանյան այնպիսի անվանի գիտնականներ, ինչպիսիք են Ա. Սեյսը, Ա. Գյոցեն, Մ. Բրոսսեն, Յ. Ֆրիդրիխը, Կ. Լեման-Հաուպտը, Ֆ. Բյոնիգը, Մ. Սալվինին, Մ. Վան Լուեր և շատ այլ գիտնականներ:

Այս բոլորից հետո մի՞թե, մեղմ ասած, խայտառակություն չէ խոսել «ուրարտագետների շայկայի» մասին կամ թե գրել «Ավանգարդ» թերթում, որ «Ուրարտու» կեղծիքը... տանու և օտար մի երկու պատմաբանների հորինվածն է»: Ի դեպ, խիստ բնորոշ է, որ հարգելի գրողը փորձում է հայ ժողովրդի ծագման, ըստ ամենայնի բարդ խնդիրները լուծել մեր երիտասարդության այդ թերթում: Ինչ խոսք, շատ հարմար տեղ է գտել: Ավելացնենք, որ Ուրարտուի հարցը փորձեցին լուծել նաև «Ողնի»-ում:

Բայց հա՞ն «գիտական» մտքի մի նոր «գոհար»: Խոսելով ուրարտագիտության մասին, գրողը պնդում է. «Տգիտություն, բթամտություն, հանցավոր հայատյացություն՝ հա՛ն ուրարտագետների հակագիտական դիրքորոշման էությունը... Մենում է ենթադրել, որ այս անօրինակ անհեթեթությունը գրված է ոչ սթափ վիճակում...»

Ավելորդ չենք համարում ուշադրություն դարձնել հետևյալ հանգամանքի վրա: Իր «եզրահանգումները» հիմնավորելու համար հանդադրանք հաճախ մտածված ձևով դիմում է փաստերը աղավաղելու ու թաքցնելու մեթոդի արարքին: Այսպես, օրինակ. հակառակորդներին «ջախ-ջախելու» նպատակով նա շատ անգամ վկայակոչում է ականավոր հայագետ-լեզվաբան, իր խոսքերով ասած՝ «մեծ Ղափանցյանին», բայց միաժամանակ խնամքով թաքցնում է այն փաստը, որ նույն Ղափանցյանը հատուկ աշխատություն է հրատարակել (տե՛ս Գ. Ղափանցյան, Ուրարտուի պատմություն, Երևան 1940), որ մանրամասնորեն խոսում է ուրարտերենի և ուրարտական պետության մասին, այսինքն զարգացնում է մի տեսակետ, որի կողմնակիցներին մեր գրողը այսօր համարում է պանթյուրքիստներ, հայ ժողովրդի թշնամիներ: Մի ուրիշ օրինակ: Այն գլխավոր կովանը, որի հիման վրա հանդադրանք իր պաշտպանության տակ է վերցնում երկրաբան Ս. Ավագյանի հակագիտական գրքույկը, այն է, որ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ս. Տ. Երեմյանը հիշված գրքույկի առաջաբանում («Երկու տող»-ում) դրական խոսք է ասել Ավագյանի «գլուխներին» մասին: Բայց ինչո՞ւ է թաքցվում այն փաստը, որ նույն Երեմյանը Հայկական ՍՍՀ հրատպետիկոմի նախագահ Գ. Մուղնեցյանի անունով, ուղարկած իր նամակում հրաժարվել է այդ «Երկու տողից» (տե՛ս «Գրքերի աշխարհ», 1987, № 2):

Մի քանի խոսք հանդադրանքի պատմագիտական ու լեզվաբանական գիտելիքների մասին: Զուգնալով համապատասխան մասնագիտական պատրաստություն, նա անուամենայնիվ անհիմն համարձակությամբ ու ինքնավստահությամբ մխրձվում է հին և հնագույն պատմության բավական բարդ խնդիրներին մեջ և շատ հեշտությամբ «լուծում» դրանք: Հետևանքը՝ զարմանալի դատողություններ և հակասույն, ֆանտաստիկ եզրակացություններ: Բերենք մի քանի օրինակ:

Հանդադրանք ամենայն լրջությամբ գրում է. «Հիշենք, որ Աղամն ու Եվան լույս աշխարհ են եկել Եղեմ երկրում, որտեղից սկիզբ են առնում Արաքսը, Կուրը, Տիգրիսն ու Եփրատը՝ բիր-լիական չորս դետերը, որոնք արտահոսում են Հայկական լեռնաշխարհից: Եվ դա մոռացություն է մատնվում» (ընդգծումը մերն է—խմբ.):

Այսպես ուրեմն, հանդադրանք իր զայրույթն է հայտնում այն մասին, որ այսօրվա «ագագալով գիտնականները» մոռանում են, որ Աղամն ու Եվան լույս աշխարհ են եկել (появились) Եղեմում ու Հայկական լեռնաշխարհում: Մի՞թե տարօրինակ չէ, որ գիտական հարցերի մասին խոսող մեր օրերի գրողը հավատում է Աստվածաշնչի այդ առասպելին և փորձում է «հերքել» իր հակառակորդներին աղամ-եվայական դիրքերից:

Թեև մեր գրողը ի վիճակի չէ կարգալ սեպագիր արձանագրություններ, բայց երբեմն վկայակոչում է դրանք և ըստ երևույթին հավատալով իր զիլետանտ խորհրդականների «ընթերցումներին», բերում է հիմնովին աղավաղված ու կեղծված տեքստեր, հորինված բառեր ու դրանցից հանում արտաոռց եզրակացություններ: Այսպես, օրինակ. ընդունելով գիտնականի կեցվածք, նա հայտարարում է.

«Հատկանշական է, որ Սարգոն II-ի մ. թ. ա. 714 թ. մի արձանագրության մեջ «որդան կարմիր» ներկը անվանված է «հայկական ներկ»:

Բացահայտ թյուրիմացություն: Նշված արձանագրության մեջ ասորեստանյան թագավորը հայտնում է միայն, որ գրավելով Ուրարտու և Խաբլի երկրները, նա կողոպտել, ավերել է ամեն ինչ և արյունով ներկել դաշտերն ու բարձունքները կարմիր բրդի նման: Բացարձակորեն ոչ

մի խոսք, աչ մի հիշատակություն Եկարմիր որդանին և Եհայկական ներկի մասին: Ուրեմն, կատարյալ հորինվածք... Եվ սրանից հետո մի՞թե կարելի է հավատ ընծայել գրողի ու նրա կիսագրագետ խորհրդատուների մյուս «գիտական» փաստարկներին:

Առհասարակ Ս. Խանզադյանը գիմում է անհավաստի տեղեկությունների և հնարովի ու կեղծ ստուգարանությունների, նա ընդհանրապես շատ հեռավոր պատկերացում ունի ժամանակակից դիտական ստուգարանության մասին: Խանզադյանը, օրինակ, լրջությամբ մեղադրում է Հայ գիտնականին, մի կողմից՝ այն բանում, որ նա չգիտի, թե Ուտարտովի ուր-որ հայերենում նշանակում է «տեղ», «տեղանք», մյուս կողմից, որ «ակկադերենում «ուր» նշանակում է «սպիտակ» և որ «ուր-Արադ» նշանակում է «Սպիտակ Արարատ»:

Հարց ենք տալիս Սերո Խանզադյանին՝ ի վերջո ուր-ը հայերեն է, թե՞ ակկադերեն: Եթե նա ճիշտ է համարում վերջինը, ապա ընթերցողին տեղյակ պահենք, որ ակկադերենում ուր «սպիտակ» իմաստով բառ չկա ընդհանրապես: Իսկ եթե նա ընդունում է, թե «ուր»-ը հայերեն է և նշանակում է «տեղ», ապա խնդրենք նրան թվարկել ուր դերանունով (այո, հարգելի գրող, ուր-ը դերանուն է) մի քանի հայերեն տեղանուն:

Ավելացնենք, որ Ս. Խանզադյանը և նրա խորհրդատուները անտեղյակ են, որ ուր-ը (ԱՐ) ոչ թե ակկադերեն բառ է, այլ շումերերեն գաղափարագիր, և որ սրա ակկադերեն համարժեքը ba'aššu, baššu «ամաչել» բայն է կամ basšu «գեղեցկություն» գոյականը, բայց ոչ երբեք «սպիտակ» ածականը:

Իր լեզվաբանական մարզանքների մեջ Ս. Խանզադյանը հենվում է հայագիտության հետ կապ չունեցող երկրաբան Ս. Ալվադյանի տվյալների վրա: Վերջինս և նրա հետևողությամբ Խանզադյանը «գյուտ» են արել, թե ասորա-բաբելական սեպագրության մեջ ուն կարդացվել է ա, գաղափար չունենալով այնպիսի «մանրութների» մասին, ինչպիսիք են հնչյունների հերթագայությունը, սեպագիր կարգալու պարզագույն կանոնները և այլն: Արխայիկ գրաբարի վերականգնման մասին խոսողները չգիտեն այն տարրական փաստը, որ գրաբարի սկզբնական վիճակում գրաբարի սեռական-տրականի ձայնավորները եղել են հիմքի կազմում, որ Տոսպ-ը սկզբնապես հնչել է Տոսպա և որ Տուշպա-ն էլ Տոսպա-ի սեպագրական տառադարձումն է:

Գրողը հայտարարում է, թե «Ս. Ալվադյանը 1959 թ. վերծանեց հայկական (ուրարտական) սեպագիրը և կարգեց այն արխայիկ գրաբարով: Դրանով իսկ ցույց տրվեց, որ բնության մեջ հայերենից տարբեր «ուրարտերեն» լեզու գոյություն չունի, քանի որ դա հայերեն է: Խոսքը 1963 թ. Ս. Ալվադյանի՝ ձեռագրի իրավունքով, ոտապարհիտով, ոչ օրինական ճանապարհով հրատարակված «Հայկական սեպագրերի վերծանությունը» գրքի մասին է, որը հրատարակվելուց մի քանի օր անց շրջանառությունից հանվեց որպես հակագիտական անհեթեթությունների ժողովածու: Այդ գրքի մասին մի խումբ գիտնականներ՝ Բ. Առաքելյանը, Գ. Զահուկյանը, է. Աղայանը, Ս. Երեմյանը, Դ. Սարգսյանը, Ա. Մարտիրոսյանը, Ն. Հարությունյանը, Մ. Իսրաբեկյանը և ուրիշներ դեռ իր ժամանակ վրդովմունքով գրել են. «Ս. Ալվադյանը խայտառակ ձևով աղավաղում և գեղեցկացնում է հայոց լեզուն». «Ս. Ալվադյանի «գիրքը» որե՛նչ կապ չունի գիտության հետ». «հետևելով հեղինակի «մեթոդին» ուրարտական սեպագրերը կարելի է կարդալ ոչ միայն հայերեն, այլև ամեն մի այլ լեզվով»:

Այստեղ տեղին է հիշել հետևյալ իրողությունը: Ս. Ալվադյանի «վերծանությունը» շատ է հիշեցնում ուրարտերենը հայերեն կարդալու նախորդ մերժված փորձերը, որոնցից մեկի՝ Մորթմանի ընթերցման մասին Հ. Աճառյանը գրել է. «Այս ուսումնական ուղեց հաստատել, թե խաղերենը հայերեն է: Ինչպես բոլոր գիտունները, նույնպես և Մորթմանը խաղյան արձանագրությունները կարդում էր ասորական այբուբենով, բայց որովհետև ինքը բավական հմուտ չէր ասորական այբուբենի գրության, շատ տեղ նշանները սխալ էր կարդում, երբեմն էլ գաղափարանշանները իբր տառ կարդում: Ընդունելով, որ խաղերենը հայերեն պիտի լինի, իր այդ սխալ ընթերցանությամբ ստացած բառերը Մորթմանը համեմատում էր արդի հայերեն բառերի հետ և իմաստներ հանում: Հյուսիսային հայագետը ցույց տվավ որ համեմատության եղբերը ճիշտ չեն, ձայնական համապատասխանությունները իրար չեն բռնում, և այն ձայնական օրենքները, որոնք ըստ Մորթմանի վերլուծման կարելի է դուրս բերել խաղերենի համար, հայերենի օրենքները չեն... Միևնույն ժամանակ Սեյա անգլիացին ցույց տվավ, որ Մորթմանը ասորեստանյան լեզուն չգիտե և տառանշանները սխալ է կարդում: Մորթմանը ինքն էլ էր ստիպված խոստովանելու, թե իր վերծանությամբ ոչ մի քերականական օրենքի չի հասնում և թե միևնույն բառի հոլովումը կամ խոնարհումը իրարից շարունակ տարբեր են: Ուրիշ խոսքով չկա քերականություն: Բայց առանց քերականության էլ լեզու չկա: Մորթմանի ընթերցանության և վերլուծման սխալ

լինելուն իբրև գերագույն ապացույց բավական է հիշել այն ծիծաղելի հանգամանքը, որ Մորթմանը Սարգսուր Ա-ի արձանագրությունն էլ որ գրված է ասորեստանյան լեզվով, խալդեերեն-կարծեց և իբր հայերեն վերլուծեց: Այսպես, ուրեմն, Մորթմանի փորձը բոլորովին ձախողված էր»:

Մեր մեծ հայագետ Հր. Աճառյանի այս տողերին ծանոթանալուց հետո Խանզադյանը արդյո՞ք կունենա քաջություն ընդունելու իր ակնհայտ մոլորությունները... Ձե՛ր որ Մորթմանի այսօրվա դիլետանտ էպիգոնները գտնվում են ավելի զավեշտական վիճակում:

«Գեղարվեստական գրականությունը նույնպես պատմագիտություն է» հայտարարում է Խանզադյանը: Ո՛չ, ճիշտ չէ: Պատմագիտությունը հենվում է միայն ճշգրիտ, հավաստի փաստերի վրա: Բայց, ելնելով իր այդ սխալ դրույթից, նա այնուհետև գրում է. «Ուրարտուի անվանունը չկա ո՛չ հեթանոսներում, ո՛չ միջերում, ո՛չ էլ առասպելներում»: Այո՛, չկա ճիշտ այնպես, ինչպես չկան նաև շումերների, խուդիների, խեթերի և ուրիշ շատ ժողովուրդների անվանումները: Եվ միայն նոր ժամանակներում հնագետների բրիչը և լեզվաբանների հմտությունը հնարավորություն են տվել վերահանել Ուրարտուի, ինչպես և հիշված ժողովուրդների պատմությունն ու մշակույթը:

«Ուրարտագետները»,— գրում է. Ս. Խանզադյանը,— խեղաթյուրում են այն ամենը, ինչ ուզում են. Վանը դարձնում են «Բիսյան», Տոսպը դարձնում են «Տուշպա»՝ խեղաթյուրում են հայկական տեղանունները: Ուրարտագետները չեն խեղաթյուրում, ընկեր գրող, այլ այդպես է գրված սեպագիր արձանագրություններում: Դրանք շատ են, ոչնչացնել չեք կարող: Ի՞նչ ի վիճակի եք՝ կարդացեք, եթե ոչ, լավ կլինի զբաղվեք ձեր գործերով:

Այսօր առկա են բազմաթիվ սեպագիր վավերագրեր, այդ թվում ասորական և ուրարտական արձանագրություններ, գրված իրադարձությունների ականատեսների, անմիջական ունկրդիրների և մասնակիցների կողմից: Դրանցում բավական մանրամասն արտացոլված է մի պետության պատմություն, որը մի խմբում անվանված է Ուրարտու, մյուսում՝ Բիսյանի: Տրված է նրա սկզբնավորումը, ծավալումն ու անկումը: Մեր առջև է մի պատկերելի նյութական մշակույթ՝ քաղաք-ամրոցներ, լի մարդու կյանքին ուղեկցող բոլոր անհրաժեշտ իրերով, որոնք ունեն իրենց ուրույն նկարագիրը: Վերջապես մեզ հայտնի է ուրարտական (բիսյանական) լեզուն, որը իր քերականական կառուցվածքով հայերեն չէ:

Խիստ աննախանձելի վիճակի մեջ է ընկնում Խանզադյանը նաև այն ժամանակ, երբ խոսում է հիբսոսների մասին: Գրախոս Ն. Մկրտչյանը միանգամայն հիմնավոր կերպով ցույց է տվել, որ երկրաբան Ալվադյանի այն «գյուտը», թե հայերը նույն հիբսոսներն են, չի դիմանում գիտական ոչ մի քննադատության և լոկ ֆանտազիայի արգասիք է: Բայց մեր գրողը համոզում է. նա փորձում է պաշտպանել Ալվադյանին և ոչինչ յասող դեկլարատիվ հայտարարություններով ու հայրենասիրության կոչերով աշխատում է շփոթության մեջ գցել անտեղիա՛յ ընթերցողներին:

Նկատենք, որ Խանզադյանի «գիտական» մտածողությունը ունի մի բնորոշ առանձնահատկություն: Գիտական հարցերում գրողին հետաքրքրում է ոչ թե ճշմարտությունը, այլ «լավ և վատի» սկզբունքը: «Ի՞նչ վատ բան է,— գրում է նա,— որ Ալվադյանը ուզում է ապացուցել, օրինակ, թե հիբսոսներն հայերն են, թե Մեծամորում է առաջին անգամ երկաթը ձուլվել, թե ձին առաջինը հայերն են ընտելացրել Հայաստանում: Իրոք՝ ի՞նչ վատ բան է»: Ուրեմն կարևորը ոչ թե իրականն է ու ճշմարիտը, այլ «ի՞նչ վատ բանն է» — այսինքն՝ ձեռնտու կամ ոչ ձեռնտու լինելը: Այս գոեհիկ տրամաբանությունը հատուկ է պատմության բոլոր կեղծարարներին: Պե՛տք էր արդյոք նետել նրանց:

Ս. Խանզադյանը պարզապես ի վիճակի չէ ըմբռնելու, որ կան մարդիկ, որոնց գործունեությունը պայմանավորված է գիտական, պատմական ճշմարտության որոնումներով, որ իսկական գիտնականները չանում են չիջնել թուրքական կեղծարարների մակարդակին, որոնք անամոթաբար կեղծում են պատմությունը, թալանում ուրիշ մշակույթները: Չպետք է զնալ նրանց հետքերով, որպեսզի մաքուր խղճով դիմակազերծ արվեն այդպիսի կեղծարարները, որպեսզի չնսեմացվեն հայ դասական պատմագրության, բանասիրության գիտական բարձր ավանդները:

Ն. Մկրտչյանի գրախոսակալում կան այսպիսի տողեր. «Ի՞նչն է պատճառը, որ Ալվադյանը, անտեսելով ու կեղծելով պատմական փաստերը, փորձում է ապացուցել, թե հայերի նախնիները հիբսոսներն են կամ թե ուղղակի հայերը նույն հիբսոսներն են: Դժվար չէ նկատել, որ այստեղ հեղինակի մեջ պարզապես խոսում է անգիտության հետ շաղախված ազգային սնահավերժությունը: Հիբսոսներին նա համարում է հին աշխարհի ամենազարգացած ժողովուրդը:

ավելին, խոսում է նրա ռազմաքաղաքական անհատականության մասին, գրում է, թե «քաղաքականության պատմությունը, կարելի է ասել, անիմաստ է առանց հիքստների» և այլն (էջ 71): Այսպես դավաճական ձևով իդեալականացնելով հիքստներին, Ալվադյանը դրանով իսկ փորձում է իդեալականացնել հայ ժողովրդի պատմությունը, քանի որ, ըստ նրա՝ հիքստները նույն հայերն են: Ազգային սնապարծությամբ պետք է բացատրել նաև հեղինակի այն պնդումները, թե հայերն են եղել ԱՌԱՋին թուշերկաթ ձուլողները, ԱՌԱՋին ձի վարժեցնողները, ԱՌԱՋին մարտականքեր ստեղծողները, ԱՌԱՋին այբուբեն հորինողները, ԱՌԱՋին տասնյակների թվային սխառն ստեղծողները, ԱՌԱՋին օրացույցը նգիպտոսում գործադրողները և այլն, և այլն»:

Գրախոսականում փաստերը չեն սրբոված: Նրանում իրերը կոչվել են իրենց անունով: Բայց մեր գրողը բողոքում է, թե ինչու է օգտագործված «ազգային սնապարծություն» արտահայտությունը, որը, իր խոսքերով ասած, «վերցրված է 1937 թ. արդեն մերժված դինանոցներին»: Նախ, հանգազյանը մի՞թե չգիտե, որ այդ արտահայտությունը օգտագործվում է այսօր, օգտագործվում է կուսակցական և այլ հեղինակավոր փաստաթղթերում այն դեպքերում, երբ խոսքը վերաբերում է իսկապես ազգային սնապարծությամբ վարակված մարդկանց: Ապա, այդ ինչպես է, որ 1937 թ. դինանոցների մասին խոսող հանգազյանը այսօր ինքն է դիմում այդ «մերժված դինանոցներին»՝ որակելով մեր օրերի մի շարք անվանի գիտնականների որպես կեղծարարներ, ազգի դավաճաններ, բարիկադների մյուս կողմում գտնվող թշնամիներ, պանթուրբիստներ է: այլն: Ո՞ր է տարրական տրամաբանությունը: Միթե պարզ չէ, թե ո՞վ է դիմում 1937 թ. դինանոցներին:

Խանգազյանը բռնադրոսիկ մեղադրանքներ է հնարում նաև «Պատմա-բանասիրական հանդեսի» նկատմամբ, քանի որ վերջինս քննադատել է նրա և Ալվադյանի արտառող «գյուտերը»: Մեզ ուղղված իր նամակի վերջում գրողը աղայական տոնով հարցնում է. «Ո՞ւմ օրգանն է այս հանդեսը»: Պատասխանում ենք: Մեր պարբերականը Հայկական ՍՍՀ ԳԱ նախագահության օրգանն է, այլ կերպ ասած, հանդեսն է այն հայագետների, ովքեր աշխատում են զարգացնել հայ դասական պատմագրության, բանասիրության, լեզվաբանության լավագույն ավանդույթները և հավատարիմ գիտության անաշուկության ու սկզբունքայնությանը, հենվելով նրա այսօրվա նվաճումների վրա՝ բացահայտել ճշմարիտը, մերժել կեղծիքն ու խոտանը, քննադատել բոլոր նրանց, ովքեր փորձում են ինչ-ինչ նկատառումներով աղավաղել ու խեղաթյուրել պատմությունը:

Ի վերջո նշենք, որ Խանգազյանը փորձում է ձեռնել ճշմարիտ քննադատությունը: Զուր քանքեր: Բայց մեր գրողը իզուր ժամանակ է կորցնում նաև այն դեպքերում, երբ զբաղվում է սեպագիր արձանագրություններով, հիքստների, ուրարտացիների և ընդհանրապես հայ ժողովրդի ծագման ու կազմավորման հարցերով, հարցեր, որոնց մասին նա ունի շատ աղոտ գաղափար: Մի՞թե պարզ չէ, որ հիշյալ գիտական խրթին և լուրջ խնդիրները կարող են լուծել մասնագետ գիտնականները:

Առաջիկա ալյաքան:

«ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ» ԽՐԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ